ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՆԱՆԴԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МАРЗПЕТАРАН АРМАВИРА
МУНИЦИПАЛИТЕТ ВАНАНДА

Թիվ 72
« 19 » 11 2013թ.

Արմավիրի մարզ գ.Վանանդ
հեռ..(0233) 6 - 12 - 22

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 06 նիստի որոշումները:

Առդիր՝ 3 էջ:

Վանանդ
համայնքի ղեկավար Զ. Մանուկյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 11202-13
«27» 11 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12.նոյեմբերի 2013 թ. թիվ 06 նիստի

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով.

Համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի գյուղական համայնքի ավագանու 20103 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 06 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

Անժման Ավետիսյան

Արթուր Թովմասյան

Համլետ Խլղաթյան

Այլազ Սլոյան

Իշխան Պապոյան

Վանանդ
համայնքի ղեկավար Զ. Մանուկյան

2013 թ. նոյեմբերի 12
գ. Վանանդ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Վանանդի գյուղական համայնքի
ավագանու 2013թ. թիվ 16 որոշմամբ

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի գյուղական համայնքի ավագանու թիվ 05 նիստի.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 06 նիստի օրակարգի հաստատումը:

/ Զեկ. Զ. Մանուկյան/

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների գյուղատնտեսական արտադրական հողի նպատակային նշանակությունը փոխելու հարցը:

/ Զեկ. Զ. Մանուկյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

12.նոյեմբերի 2013 թ. թիվ 06 նիստի

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 17

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ, 29-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Վանանդ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Վանանդ համայնքի ավագանին որոշեց.

1. Տալ համաձայնություն փոխելու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող 04-089-0105-0014 ծածկագրի 5.17 հա. արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների գյուղատնտեսական արտադրական հողի նպատակային նշանակությունը ջրային նշանակության՝ կաթիլային ոռոգման համար ջրամբար կառուցելու նպատակով:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին / Զ. Մանուկյան/՝ սահմանված կարգով կազմել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

Աննման Ավետիսյան

Արթուր Թովմասյան

Համլետ Խլղաթյան

Այլազ Սլոյան

Իշխան Պապոյան

Վանանդ համայնքի ղեկավար Զ. Մանուկյան

2013թ. նոյեմբերի 12
գ. Վանանդ